

Title: FRET NOT

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ՄԻ՝ ԲԱՐԿԱՆԱՐ

Դ-ր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,
Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթողիկոս»-ում
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Սելիասա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

ՄԻ՝ ԲԱՐԿԱՆԱՐ

«Մի՝ բարկանար»...էջ 662՝ ձեր Աստվածաշնչում, եթե այն այնպիսին է, ինչպիսին իմն է: Եթե չունեք Աստվածաշունչ, ապա դա Սաղմոսների գրքում է: Սաղմոսներ. Սաղմոս 37: Եթե Աստված ինչ-որ բան ասում է ավելի, քան մեկ անգամ, ուրեմն Նա բավականին բան ունի ասելու: Կան շատ մարդիկ, ովքեր ստիպված են մի բանը մեկից ավելի անգամ ասել, որովհետև դրանից ավել նրանք ոչինչ չունեն ասելու: Բայց երբ Աստված կրկնում է, ուշադրություն դարձրեք. դա պետք է, որ կարևորություն ունենա: Սաղմոս 37, 1-ին խոսք. «Մի՝ բարկանար», 7-րդ խոսք. «Մի՝ բարկանար»: 8-րդ խոսք. «Մի՝ բարկանար»: Ով որ երբեք չի բարկացել, կարող է հեռանալ: Ես թույլ չեի տա հեռանալ նրանց, ովքեր եկել էին տեսնելու «Պռոնիկը»: Բայց եթե դու երբեք չես բարկացել և ոչինչ չգիտես այդ փորձառության մասին, ես քեզ ոչինչ չունեն ախոր ասելու:

Սա մի յուրահատուկ ուղերձ է: Ես քարոզում եմ քարոզներ, որոնք նման են որսորդական հրացանի կրակոցի՝ նախատեսված նրանց համար, ում գնդակը կհարվածի: Ես քարոզում եմ քարոզներ հրացանի կրակոցի նման: Մեծ մասամբ այստեղ մենք ցուցադրում ենք Աստծո վերահսկողությունը պատմության վրա: Եվ դա արվում է հավատք առաջացնելու նպատակով, որովհետև Պողոսն ասում էր. «Հավատքը լսելուց է, և լսելը Աստծո խոսքից», և կարիք չկա, որ դու ինքդ ջանքեր թափես դրան հասնելու համար: Եթե դու կարողանաս ենթարկվել Աստծո գործողություններին բավականին երկար ժամանակ, դու կսովորես վստահել Նրան:

Ես այս քարոզը ամեն տարի քարոզում եմ ինքս ինձ համար: Դու էլ կարող ես այն լսել, եթե բարկացկոտ մարդ ես: Այս քարոզը նախատեսված է ցանկացած մարդու համար, ով երբևէ բարկացել է, որպեսզի մեզ քայլ առ քայլ առաջնորդի այնպիսի ապրելակերպի մեջ, որը թույլ կտա մեզ անցնել

սուկալի, դժվար ժամանակների միջով, որոնցով ես եմ անցել ավելի հաճախ, քան կարող եմ հաշվել: Արծաթագույն մազերը չեն խոսում տարիքի մասին, այլ ցույց են տալիս անցած մղոնների թիվը: Եթե ես կարողանամ մարդկանց ուշադրությունը գրավել և նրանց ազատ թողնել իրենց փորձառության մեջ, այս քարոզը նրանց կանցկացնի 1988 թվականի կամ որևէ այլ տարվա միջով:

Աստված երբեք չի խնդրում քեզանից անել այն, ինչը դու չես կարող անել: Եվ ցանկացած քարոզիչ, ով կասի քեզ այդ բանը, նա այն գերհոգևոր մարդկանցից է, որոնց մասին նկարագրում էր Դետրոյտի հովիվ Բոն Բոունենը, որն ամենից մեծ ներգործությունն է ունեցել ինձ վրա: Նա ասում էր. «Ինձ մոտ գալիս էին ավետարանիչներ և իմ մարդկանց միշտ ասում, որ ինչ-որ բան են զգում այդտեղ, ու նրանց լարվածության մեջ պահում, որպեսզի նրանք փորձեն ունենալ այդ տարօրինակ հոգևոր փորձառությունը, որը ոչ ոք չի կարող ունենալ»:

Եթե քրիստոնեության մեջ կա որևէ կենտրոնական ճշմարտություն, ապա դա Նոր կտակարանի այն պարզ ուսմունքի մեջ է, որից դուրս են եկել բոլոր մնացած դավանանքները: Այդ ճշմարտությունն է՝ Աստված Քրիստոսում էր: Եվ մարմնավորման ուսմունքը սովորեցնում է, որ Աստված, Հովհաննեսի խոսքերով ասած, «վրան խփեց» մարդկային մարմնի մեջ. մտավ այդ մարդկային մարմնի վրանի մեջ, որը կոչվում էր Հիսուս Նազովրեցի: Նա դուրս եկավ անտեսանելիից և ի ցույց դրվեց ամենքին՝ հայտնվելով սովորական կյանքի փողոցներում: Հովհաննեսն ասում է. «Աստծուն ոչ ոք չի տեսել, բայց Քրիստոսը պատմեց»: Այստեղ հունարեն բառը «exegesis» բառի արմատն ու հիմքն է, որը նշանակում է «վարագույրի ետևից դուրս հանել», «ի ցույց դնել»:

Աստված ծածկված էր: Մարմնավորման ուսմունքը սովորեցնում է, որ Քրիստոսը Աստծո «exegesis»-ն էր: Նա Նրան դուրս հանեց վարագույրի ետևից, ի ցույց դրեց ամենքին, դրեց նրան սովորական կյանքի փողոցների մեջ: Եվ այն ամենը, ինչ քեզ հարկավոր է իմանալ Աստծո մասին, Նա դա ի ցույց դրեց այնտեղ, որտեղ սովորական մարդիկ են ապրում: Ենթադրում եմ, որ ձեզ Աստվածաշնչյան քոլեջում սովորեցնում են աստվածաշնչյան էզզեգետիկայի մասին, որի նպատակն է խոսքի նշանակությունը դուրս հանել վարագույրի ետևից և ի ցույց դնել: Քանի՞սն են ունեցել այն փորձառությունը, ինչ ես եմ ունեցել: Դու գալիս ես եկեղեցի՝ մտածելով, թե ինչ-որ բան գիտես, և երբ քարոզիչն ավարտում է, Խոսքը և դու հայտնվում եք վարագույրի ետևում, կամ էլ դու շնչասպառ ես լինում:

Աստված մտադիր էր հասկանալի դառնալ, հակառակ դեպքում Նա չէր տեղափոխվի մարդկային մարմնի այդ վրանի մեջ: Եվ Աստծո Խոսքը, Աստծո պատվիրանները և Աստծո խոստումները սկսվում են այնտեղից, որտեղ մենք ապրում ենք:

Հիմա այս հատվածում «մի՛ բարկանար, մի՛ բարկանար, մի՛ բարկանար» խոսքերը պարզ հրաման են: Այդ հրամանը տրվում է երեք անգամ՝ շեշտ դնելով սաղմոսի ավարտին, երբ 37-րդ խոսքում ասվում է. «Այսպիսի մարդու վերջը խաղաղությունն է»:

Այժմ ես կարող եմ օգտագործել Աստծո գրքի այս ուղերձը. դա ինձ համար է: Այս առավոտ ես արթնացա բարկանալով: Այս քարոզը ես քարոզել եմ շուրջ 12 տարի, բացի այս տարվանից, և այն պետք է կրկնել, որովհետև ես դեռ բարկանում եմ: Ինչպե՞ս ես բարկությունից հասնում խաղաղության: Եկեք նայենք: Հիմա, դու գիտես, թե ինչի մասին է ուղերձը: Եկեք սկսենք:

«Վստահիր Տիրոջը» (հայերեն թարգմանության մեջ գրված է՝ «Տիրոջը հուսա»): Հիմա դուք կգտնեք չորս կամ հինգ բան, որոնք մենք պետք է անենք: Այստեղ խնդիրը կայանում է սկսելու մեջ: Այս բաներից ոչ մեկը վեր չէ մեր կարողությունից: Բայց դուք բաց չեք թողնի Աստծո աջակցությունը բարկությունից դեպի խաղաղություն տեղափոխվելու մեջ, մինչև չանեք շատ քիչ բաներ, որոնք ես պատրաստվում եմ ներկայացնել: Դա մնան է նրան, որ առանց լարը խրոցակի մեջ մտցնելու, չեք կարող միանալ հոսանքին: Դա քրիստոնեության հիմքն է: Բայց ես ամեն տարի մոռանում եմ այն:

Դուք պատրաստ եք: Ես գիտեմ, որ դուք եկել եք՝ վերջում նստելու և բացահայտելու «Պռոնիկի» առեղծվածը: Իսկ ես այստեղ եմ այս աշխատանքային ուղերձներից մեկով: Դուք պետք է հետևեք ինձ, նախքան Աստված գործի կանցնի: Դուք գիտեք այս պատմությունը: Սա տիպիկ քրիստոնեությունն է. Շաբաթ առ շաբաթ երիտասարդն աղոթում էր. «Օ~, Աստված, թող հաղթեմ վիճակախաղը»: Նույն երկիր 2 շաբաթով գալիս է մեկ ուրիշ անձնավորություն և շահում քսան միլիոն: Եվ դու, նստած այստեղ, ասում ես. «Աստված, դա արդար չէ, ինչու՞ չթողեցիր, որ շահեմ վիճակախաղը»: Հիշու՞մ եք պատմությունը: Մի քանի շաբաթ անց Աստված վերջապես ասում է. «Տուր ինձ հնարավորություն, ով մարդ: Գնա և տոմս գնիր»: Սա տոմս գնելու մասն է:

Թիվ 1. «Վստահիր Տիրոջը»: Ա~հ, հին խոսքեր են: Եկեք պարզապես մի րոպե վերլուծենք այդ բառը: Հին կտակարանի բնագրում կա ընդամենը երկու բառ, որոնք թարգմանվում են «վստահություն»

կամ «հավատք»: Բառերից մեկը նշանակում է «վազել և ապաստան գտնել ժայռի մեջ» կամ «պատասպարվել մայր թռչունի թևերի տակ»: Դու կարող ես ամբողջ օրը կանգնած մնալ սպառնալիքի առջև, և դու չես վստահում կամ չունես հավատք, մինչև չվազես ժայռի մեջ կամ չպատասպարվես մայր թռչունի թևերի տակ: Դա գործողություն է, բարեկամս: Ոչ թե պարզապես մտքեր, այլ գործողություն: Մյուս բառը նշանակում է «հենվել գավազանին» և ամբողջ ծանրությունդ դնել նրա վրա: Սրանք այն միակ երկու բառերն են Հին կտակարանում, որոնք թարգմանվում են «վստահություն» կամ «հավատք»: Անցիր բոլոր գրքերի միջով. դա այդպես է: Չկա մի բառ, որ թարգմանվի «վստահություն» կամ «հավատք», որը նշանակի «դավանանք» կամ «համոզմունք» կամ «նույնիսկ միտք ինչ-որ բանի մասին»: Դու չես ունենա այն, ինչ Հին կտակարանում նշանակում է «հավատք» կամ «վստահություն», մինչև չանցնես համոզմունքից այն կողմ և մարմնով կառչես նրան, ինչին համաձայն է քո միտքը, գործելով համապատասխան նրա, ինչին դու հավատացել ես: Վազիր կամ հենվիր:

Ո՞ր բառն է օգտագործվում Նոր կտակարանում «հավատքի» համար: Հունարենում այն նշանակում է գործողություն, որը հիմնված է համոզվածության կամ հավատքի վրա և պահպանվում է վստահությամբ: Ոչինչ չի ոչնչացրել հավատքի և վստահության աստվածաշնչյան նշանակությունը, ինչպես անգլերեն լեզուն, որն ունի «հավատալ» բառը, որը ներառում է միայն միտքը, երբ երկու դեպքում էլ՝ թե Հին, թե Նոր կտակարաններում, այդ բառը ոչ միայն ներառում է միտքը, այլև զգացմունքները՝ վստահության մակարդակի վրա, ինչպես նաև կամքը, որը պահում է մարմինը և ստիպում նրան ամուր կառչել նրանից, ինչի հետ համաձայն է միտքը, և ինչին կարող է հավատալ սիրտը:

Ես կարող եմ նայել ինքնաթիռին օդ բարձրանալիս և, իմանալով աերոդինամիկայի յուրաքանչյուր տեսության մասին, հավատալ, որ այն կմնա օդում: Դա հավատք չէ: Դա վստահություն չէ: Ես չեմ վստահում, ոչ էլ իսկապես հավատում, մինչև չնստեմ այդ ինքնաթիռի մեջ, չամրացնեմ ամրագոտին և մարմինս պահեմ նրանով:

Հիմա դու ասում ես. «Ես դա լսել եմ հազար անգամ»: Ուրեմն, դու ավելի երջանիկ ես, քան շատ եկեղեցիներ: «Բայց ես գիտեմ դա»: Դու մտածում ես, թե ես չգիտե՞մ: Ես էլ եմ դա հազար անգամ լսել: Բայց բարկությունը գլուխ է բարձրացնում, որովհետև իմ կյանքի հիմնական ուղղվածությունը այլ բանի վրա է լինում: Ես դա մոռանում եմ ամեն անիծյալ շաբաթ: Եվ երբ մոռանում եմ, կարող ես հաստատ համոզված լինել, որ դա անիծյալ շաբաթ է: Ամեն ինչ տապալվում է: Իմ միտքը, իմ ուղղվածությունը, իմ հույզերը, իմ ուշադրությունը և սովորաբար իմ կամքը լինում են ինձ հասանելի ամեն մի կենտրոնի վրա,

բացի Տիրոջից: Դա այնքան պարզ է: Դա նման է ճանապարհից շեղվելուն: Պետք չէ, որ դու լինես հոգևոր՝ այս ու այն կողմ քայլելով և ամբողջ օրն ասելով. « Փառք Տիրոջը, փառք Տիրոջը»: Բայց մեր գիտակցության ծրարի վրա մենք մեզ տեղյակ ենք պահում քրիստոնեության հիմնական ճշմարտության և ամբողջ Եբրայեցիների թղթի քրիստոնեական հավատքի մասին, հակառակ դեպքում ի՞նչ գործ ունես դու այստեղ:

Հիշեք, հավատքի հերոսներին ուսումնասիրելիս ես ձեզ սովորեցրեցի Հին կտակարանում գոյություն ունեցող մի տարբերության մասին: Դուք հիշու՞մ եք տարբերությունը Եղյայի և նրա շուրջը գտնվող մնացած մարդկանց միջև: Երբ նա հայտնվում էր, ինչ-որ բան Նրա մեջ ստիպում էր մարդկանց մտածել Աստծո մասին: Երբ նա հայտնվում էր, նրանք շատ հոգևոր էին դառնում: Նա հայտնվում է այն ժամանակ, երբ որբևայրի կինը սովից մահանում էր: Նրան տեսնելով՝ կինն ասում է. «Իսրայելի Տեր Աստվածը»: Աբդիան, որը լավ մարդ էր, որովհետև նա թաքցրեց մարգարեներին, որոնց Աքաաբը պատրաստվում էր սպանել, Եղյայի հայտնվելուն պես հանկարծ դառնում է հոգևոր. «Կենդանի է Իսրայելի Տերը»: Անկախ նրանից, թե որտեղ ես հանդիպում Եղյային, այնտեղ կա մի փոքր ծանոթագրություն. «Կենդանի է Իսրայելի Տեր Աստվածը, որի առջև ես կանգնած եմ»: Որքան ավելի շատ ես ապրում, որքան ավելի շատ բաների մեջ ես ներգրավվում, այդքան ավելի շատ բաներ են ի հայտ գալիս Աստծո ներկայության իրականությունից և այն ուղերձի իրականությունից, որը մենք քարոզում ենք վերջին վեց շաբաթներին. Աստված հոգ է տանում մեր մասին, Նա գիտի ինձ և քեզ, Նա մտահոգված է մեզ համար, Նա կանչ ունի մեր կյանքի համար:

Ես ասել եմ, որ կյանքի ցանկացած այլ փիլիսոփայությունից ավելի քրիստոնեությունը սովորեցնում է անհատականության մասին, որովհետև Իր ծրագրում Աստված մեզանից յուրաքանչյուրի համար Իր հետ կապված ունի մի բան, որ հավիտենության մեջ ոչ մի ուրիշ մարդ չի կարող անել, ոչ էլ կանի: Եվ դու պետք է դա վճռես, երբ գալիս է բարկությունը: Ես էլ ստիպված եմ լինում դա վճռել ամեն անգամ, երբ անցնում եմ բարկության որևէ հանգամանքի միջով: «Կարո՞ղ եմ վստահել»: «Կարո՞ղ եմ վստահել Տիրոջը»: Դա է հարցը:

Հիմա, անկեղծ ասած, ես շատ անգամ եմ կասկածել այն եղանակի վրա, որով Նա գործել է այս վերջին տարին: Դե, ինքնագոհ կեղծավորներ... Անցյալ տարի ամենաքիչը հիսուներկու անգամ (այսինքն՝ շաբաթը մեկ անգամ) ես ասել եմ. «Լսիր, ես ասում եմ նրանց, որ Քեզ կարող են վստահել: Իսկ սա մեկ ուրիշ խառնաշփոթ է, որի մեջ ինձ մտցրել ես»: Հասկանում ես, այնքան հաճախ դու պետք է սա կարգի

բերես: Ես չգիտեմ, թե ինչպիսի խառնաշփոթ իրավիճակի մեջ է Նա քեզ այսօր գցել, բայց դու գիտես, որ ես սա շատ անգամ եմ ասել: Ես չեմ ունեցել տեսիլքներ. կուզենայի իմ հայրիկի նման տեսիլք տեսնել: Ես երբեք չեմ տեսել 70 ոտնաչափ հասակ ունեցող Հիսուսի: Անկեղծ ասած, եթե ես տեսնեի 7 մատնաչափ հասակ ունեցող Հիսուսի, այդքան էլ չէի պարծենա դրանով: Ես ուղղակի երեսնիվայր գետնին կհայտնվեի: Աստվածաշնչում մեծ մասամբ երբ հրեշտակ էին տեսնում, գետնին էին ընկնում: Դա ամենահամոզիչ ապացույցն է, որ նրանք ճշմարտությունն են ասում:

Ես կորցրեցի իմ հավատքը: Ես գիտեմ, թե ինչ է նշանակում տարիներով անորոշության մեջ թափառելը: Եվ ես ետ եկա հարության մասին քրտնաջան ուսումնասիրություններից հետո: Ես հավատում եմ, որ Նա դուրս եկավ գերեզմանից ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ մեկը ասաց ինձ կամ ուղեղս լվաց դրանով, այլ դժվարին և քրտնաջան ուսումնասիրություն կատարելով: Չկա ուրիշ ոչ մի բացատրություն: Եվ դուք գիտեք, որ ես ամեն տարի ասում և քարոզում եմ, որ եթե դու գաս և ասես այն, ինչ Հիսուսն ասաց Իր մասին, ես հավանաբար կմտածեմ, որ դու հանձնվել ես Տիրոջը: Բայց եթե դու երեք օր հետո դուրս գաս այն գերեզմանից, որի մեջ մենք քեզ փակել ենք, ես մի այլ հայացքով քեզ կնայեմ, հատկապես եթե դրանից առաջ մի քանի օր նավարկել ես կապույտ ծովում: Եվ քանի որ ես որոշեցի վստահել այս Տիրոջը, երբ բարկությունը գալիս է, սովորաբար այն պատճառով է, որ իմ աչքերը հառում եմ աշխատանքի և ցանկացած այլ բանի վրա: Եվ քո հովիվն էլ պետք է դա վճռի, քանի որ նա, ինչպես և դու, մտնում է 1988 թվականի մեջ. արդյո՞ք Տերը վստահելի է: Որովհետև եթե Նա վստահելի է, ավելի լավ է, որ ես վազեմ և կրկին էլ ավելի ամուր հենվեմ Նրա վրա:

Դու ասում ես. «Դե լավ, ինչպե՞ս ես դու դա անում: Ես Նրան ոչ մի տեղ չեմ տեսնում»: Ես ուզում եմ դա պարզ դարձնել և արդեն ասացի, որ ես պատրաստվում եմ քեզ այսօր ձեռքից բռնած առաջնորդել, մինչև հասնենք Աստծուն պատկանելիք մասին, որովհետև Նրանը լավ մասն է: Սա աշխատանքային մասն է:

Նոր կտակարանում խոստմունք պահանջելու և նվիրումը նորոգելու եղանակը շատ պարզ է: Հռոմեացիների գիրքն ասում է. «Չասես քո սրտում. Ո՞վ վեր կելնե երկինք, այսինքն՝ Քրիստոսին վայր բերելու համար: Կամ ո՞վ կիջնե անդունդն, այսինքն՝ Քրիստոսին մեռելների միջից հանելու համար»: Սեր քրիստոնեական հավատքի ընթացքի մեջ կա մի փուլ, երբ Աստված ակնկալում է, որ մենք սկսենք գործել Նրա ասածի համաձայն, որովհետև Նա գրանցում է այդ ամենը:

Երբ Իսրայելի գավակներին ցերեկը ամպի սյունն էր առաջնորդում, իսկ գիշերը՝ կրակը, և ամեն առավոտ մանանա էր թափվում երկնքից, եկավ մի պահ, երբ Հորդանան գետն անցնելուց հետո մյուս ափին մանանան դադարեց թափվել, անհայտացան ամպի սյունն ու կրակը: Արդեն կատարվածի պատճառով նրանցից ակնկալվում էր մի քիչ ավելի շատ գործել Աստծո անտեսանելի իրականության և Նրա կողմից Իր իսկ Խոսքը պահելու հետևողականության հիման վրա: «Կարո՞ղ եմ վստահել Տիրոջը»: Նախ և առաջ դու պետք է դա վճռես: Դու ասում ես. «Բայց ես այս խնդիրն ունեմ, որի վրա ուզում եմ կենտրոնանալ»:

Մոռացիր դա, շրջվիր: Շրջվիր մի կողմ, փոխարինիր այն: Պարզապես մի պահ շրջվիր ինձ հետ քո խնդրից և հարցրու ինքդ քեզ. «Ինչու՞ ես դու տարվա վերջին շաբաթը այստեղ գտնվում: Արդյո՞ք Տերը վստահելի է: Եթե այո, ապա ինչպե՞ս ես Նրան վստահում»:

Նոր կտակարանն ասում է. «Պետք չէ, որ բարձրանաս և Նրան վայր բերես: Պետք չէ, որ իջնես և Նրան վեր բերես: Մոտիկ է քեզ խոսքը, քո բերանում է, խոսիր այն: Որովհետև սրտով հավատում ենք և բերանով դավանում ենք փրկվելու համար» («դավանությունը» գրական հունարեն բառն է): Իսկ փրկությունը՝ «soterion» հունարեն բառը, նշանակում է մի ամբողջ ընթացք, որը ներառում է քո կյանքի յուրաքանչյուր ոլորտը, երբ մարդը գիտակցում է, թե ինչպիսին պետք է լինի իր առողջությունը, տեսիլքը, կարողությունները և վերջնական նպատակակետը: Փրկության այս ընթացքը մշտական նորոգումն է նրա, ինչ Աստված խոստացել է սրտով հավատալու և բերանով դավանելու միջոցով: Սա այնքան հասարակ է, որքան երեխային կերակրելը: Դու պետք է դա վճռես:

Շատ մարդիկ այսպես են լսում քարոզը. նրանք անջատում են իրենց ուղեղը և հետո, երբ եկեղեցուց դուրս են գալիս, առաջին բառերը, որ ասում են իրենց կողքինին, սրանք են. «Ես այսպիսի խնդիր ունեմ, չգիտեմ, թե ինչպես եմ դրա հարցը լուծելու մինչև հաջորդ կիրակի: Այսօր ես իմ փոքրիկ մասն արեցի Աստծո համար, բայց դա միշտ ինձանից խլում է այն ժամանակը, որը ես կարող էի օգտագործել իմ խնդիրը լուծելու համար»: Դրա փոխարեն ես ցանկանում եմ, որ դու այստեղից դուրս գաս (սա աշխատանքային մասն է, քո մարմինը պետք է ամուր կառչի դրանից) և ասես. «Սպասիր, ինչի՞ համար եմ ես քրիստոնյա դարձել»:

Ես նկատի ունեմ, որ դու նայում ես աշխարհի ամենաբնական մեղավորին: Ես խոստովանություն կանեմ այս բազմությանը. դա ինձ կստորացնի: Ես երբեք իմ կյանքում հարբած չեմ եղել: Ջերրի Ֆոլվելի

ժողովուրդը կասեր. « Փառք Տիրոջը»: Իմ ժողովրդի համար դա կյանքի մի բնագավառ է, որը ես դեռ լիովին չեմ ըմբռնում: Պարզապես մտքով ընդունիր այն, ինչ ասում եմ, և հարցրու ինքդ քեզ. «Արդյո՞ք քո կրոնը պարզապես շարժումներից է բաղկացած, թե՞ կա Աստված, որին կարող ես վստահել»: Պարտադիր չէ, որ ես ինչ-որ կաղապար քեզ ներկայացնեմ: Դու գիտես կաղապարը. Աստված Իրեն հայտնեց Քրիստոսում: «Վստահիր Տիրոջը»:

Թիվ 2. «Յնծացիր»: Սա այնքան հասարակ է, որ ինձ խենթացնում է: «Յնծացիր Տերով»: Ես ուզում եմ ձեզ մի բան ասել, և դուք կարող եք կամ ընդունել դա, կամ ոչ: Աստվածաբաններն անվանում են դա «նախաշնորհ»: Եկեղեցին աշխարհում չէ, որպեսզի փրկի աշխարհը: Եկեղեցին ներկայացնում է այն մի քանիսին, որոնք փրկվել են աշխարհից: Եվ Հիսուսն ասաց. «Քչերն են նրանով գնացողները»: Դուք լսել եք, որ ես ասել եմ, որ Աստված ինչ-որ ավետարանիչ չէ, որը նվաստորեն դողդողում է ձեր դռան ետևում և աղաչում ներս մտնել: Աստված չի ուզում որոշ մարդկանց:

Հիսուսը մի առակ պատմեց և ասաց. « Եթե այս առակը չեք հասկանում, էլ ինչպե՞ս կհասկանաք մնացած բաները, որ ես սովորեցնում եմ»: Դուք նույնիսկ չեք կարող լինել աշակերտ, որը «սովորող է»: Դա «Սերմնացանի» առակն էր :

Չորս տեսակի հող. սերմը նույնն է: Երեքը չեն ընդունում: Մեկը՝ բարի հողը, պտուղ է բերում: Հետո Նա բացատրում է առակը. «Պատճառը, որ այս ճշմարտությունները առակներով եմ ասում, այն է, որ չլինի թե մի քանիսը հասկանան և փրկվեն»: Հիմա երբ ես մտածում եմ նրանց մասին, ում չեմ ցանկանում երկնքում տեսնել, դա ուղղակի ուրախացնում է ինձ: Ես ունեմ մարդկանց մի ամբողջ ցուցակ, որոնց չեմ ուզում տեսնել երկնքում: Դուք բոլորդ կարող եք երջանիկ լինել, ես չեմ որոշողը: Բայց ճշմարտությունն այն է, որ Ինքը՝ Հիսուսը, ճշմարտությունը ծածկում էր առակներով, որովհետև Նա չէր ցանկանում, որ մի քանիսը դարձի գան: «Ի՞նչ»: Գիտե՞ք, եկեղեցին այնքան երկար ժամանակ է նվաստորեն աղաչել, որ աշխարհը մտածում է... Դա նման է սրան. «Եթե ուրիշ ոչ մեկի չկարողանամ գտնել, ես կդիմեմ այս օգտագործված կնոջը»: Աստված այդպես կարիքավոր չէ:

Երբ ես սովորեցնում էի քոլեջում, մի երեխա կար, որն ասում էր. «Ես չեմ դառնա քրիստոնյա, մինչև Աստված չկանչի ինձ, որ դառնամ քարոզիչ»: Ես ասում էի. « Որդիս, հանգստացիր: Աստված այնպես կարիքավոր չէ, ինչպես մենք մտածում ենք»: Բայց կան որոշ չափանիշներ նրանց համար, որոնք «կանչված են», և «նախաշնորհն» ասում է. «Նախաձեռնությունը սկսվում է Աստծուց»: Եվ աշխարհի

սկզբից Աստված սկսեց համալրել փրկվածներին: Դու միգուցե մտածես, որ դա դժբախտ պատահար էր կամ ինչ-որ ուրիշ փորձառություն, որ քեզ բերեց Աստծուն: Կան հազարավոր մարդիկ, որոնք թողել են եկեղեցին, բայց իրենց սրտի խորքում նրանք չեն թողել Աստծուն, ոչ էլ Աստված է թողել նրանց:

Աստծո կոչումը և ընտրությունը, ինչպես Աստծո խոսքն է ասում, զոջալ չունի: Ու երբ Աստված նշան է դրել քեզ վրա, ինչպես էլ այդ լույսը թափանցի քո սրտի մեջ, կան որոշ տարբերակիչ գծեր այդ «նշան դրվածների» համար: Նրանք ունեն արձագանքելու ընդունակություն: Նրանք ունեն աչքեր լույսը տեսնելու համար: Երբ դու միացնում ես այն, այն վկայություն է տալիս: Այն մարդկանց, ովքեր զգացել են այդ կանչը, բայց ինչ-որ ավելի լավ խոսքի, ինչ-որ հրման, հետաքրքրության, կարողության պակասի կամ մեկ այլ դրդապատճառով ցանկացել են հանձնվել, ես ասում եմ ընդամենը մեկ բան. «Վստահիր Նրան»: Դա ամենն է, ինչ ես ասում եմ: Եվ հետո վերլուծեք, թե ինչու եք հայտնվել այդ խառնաշփոթության մեջ: Ես այս խոսքը կարդացել եմ հազար անգամ: Ես անգիր եմ արել այն: Ես դրանք կետերով անգիր անել եմ տալիս կիրակնօրյա դպրոցում: Ես ունեի իմ մեկնաբանությունը, և ինչպիսի ցնցում էր ինձ համար, երբ ես իսկապես սկսեցի վերլուծել այն, որովհետև ես հաստատ գիտեի, թե ինչ էր ասում այդ խոսքը. «Յնծացիր Տերով, և Նա կտա քեզ քո սրտի ուզածները»:

«Լավ, Աստված, Դու ունես Քո մասը: Ո՞րն է իմը»: Ես կցնծամ ամեն մեկով, ով կտա ինձ իմ սրտի ցանկությունները: Դու չես տեսել մեկին, ով կարող է ցնծալ քեզանով այնպես, ինչպես ես, եթե դու ինձ տաս իմ սրտի ցանկությունները: Եվ այդ առաջին փոքրիկ ալիքից հետո մի տարի է ինձանից պահանջվելու, որպեսզի բեռնաթափեմ իմ սրտի ցանկությունները: «Յնծացիր Տերով, և Նա կտա քեզ քո սրտի ուզածները»: Շատ քիստոնեական ճշմարտություններ պարադոքսալիկ են: Անգլերեն լեզուն չգիտի՝ ինչպես վարվել դրա հետ: Մենք հիմնվում ենք արիստոտելյան տրամաբանության վրա. «եթե..., ապա...», ուստի ես միանգամայն պատրաստ էի ցնծալ Տիրոջով, որպեսզի ստանայի: Այդպես չի ասվում:

Ցանկացած փոխհարաբերության մեջ գալիս է մի պահ... և վերջիվերջո Քրիստոնեության Աստվածը անձնավորություն է, և անձնական փոխհարաբերության մեջ, ես չեմ հասկանում սա... կա երեք տեսակի սեր: Հունարենում կա երեք բառ սիրո համար: Eros, որից կարող ենք ազատվել մեկ րոպեից, դրանից գալիս է երոտիկ բառը: Ամեն ոք գիտի, թե ինչ է դա նշանակում, ուստի ես ձեզ չեմ ձանձրացնի:

Phileo, որից ստանում ենք Ֆիլադելֆիա բառը. դուք դա արդեն գիտեք ընթացիկ «Ճշմարտություն» ամսագրից, այնպես որ դուք պետք է իմանաք, թե ինչ է phileo-ն: Այն փոխադարձ է. ես անում եմ քեզ

համար, դու անում ես ինձ համար: Ես կարիք չունեմ իմ օգուտի մասին մտածել, որովհետև դու արդեն մտածում ես: Ինչ-որ անում եմ քեզ համար, նույնը դու անում ես ինձ համար: Եվ մենք ապրում ենք՝ փորձելով գտնել այդպիսի փոխհարաբերություններ: Ես դեմ չեմ ինչ-որ մեկի համար ինչ-որ բան անել, եթե կարող եմ վատահ լինել, որ նա էլ ինձ համար կանի: Այստեղ պարադոքսը դրված է մեր Արարչի կողմից. Նա է մեզ ստեղծել: Դու կարող ես քո ողջ կյանքում փնտրել phileo-ն՝ այդ փոխադարձ հավասարակշռությունը. հենց նրան փնտրելը կանխում է նրան գտնելը: Սա մի բան է, որի ժամանակ դու գործ կունենաս բնագրի հետ, բայց կիմանաս այն ճշմարտությունը, որ phileo-ն փնտրելու գործողությունն իսկ ժխտում է այն գտնելը:

Այն պահին, երբ ես մտածում եմ, որ դու ինձ համար ես անում, որպեսզի փոխարենը ստանաս, որքան էլ փորձեմ ինձ պահել, այդպես ենք մենք ստեղծվել, ես սկսում եմ իմ օգուտի մասին մտածել: Դու հաշվարկ ես անում, թե ինչ ես անում ինձ համար, և ես էլ սկսում եմ հաշվարկել իմ փոխհատուցման հաշվեկշիռը: Կարծում եմ, որ ես միակ մեղավորը չեմ այստեղ:

Եթե այնպես լինի, որ ինչ-որ մեկը ինձ համար ինչ-որ բան անի՝ չունենալով ոչ մի հնարավոր պատճառ ի պատասխան ինչ-որ բան ստանալու, ապա իմ էության մեջ կա նաև նույն ձևով չարձագանքելու անկարողությունը: Եթե ես խեղդվում եմ գետում և գիտեմ, որ դու վտանգում ես քո կյանքը և ինձ քաշում դեպի ափ, ես կարիք չունեմ ափին ինձ համոզելու, որ դու ինձ դուր ես գալիս: Սիրո օրենքը այսպիսին է: Դու ինձ անձնագոհությամբ տալիս ես՝ առանց որևէ հաշվարկի: Մագնիսի նման ես արձագանքում եմ: Դա agapao-ն է: Սա միակ տեսակի սերն է, որ Աստված պատվիրում է: Աստվածաշնչում ոչ մի տեղ Նա չի պատվիրում ունենալ phileo սեր: Ոչ մի տեղ Նա չի պատվիրում ունենալ eros: Agapao-ն այն սերն է, որը հոսում է դեպի այն առարկան, որին սիրում են նրա մեջ ներքին արժեք տեսնելու պատճառով: Դու նվիրվում ես նրան կամ զոհ անում նրա համար, որովհետև նրանում ինչ-որ արժեք ես տեսնում: Եվ պարադոքսը այն է, որ դրանում ոչ մի եսասիրություն չկա:

Պարադոքսային ձևով, երբ այդպիսի սերը հոսում է, այն առաջացնում է այնպիսի արձագանք, որը դրսևորվում է phileo-ի միջոցով: Ինչպես բոլոր խորը քրիստոնեական ճշմարտությունները, դու հասնում ես այս բանին՝ այսպես անելով, դու ապրում ես՝ մեռնելով, դու դառնում ես առաջին՝ վերջինը լինելով: Դու ստանում ես phileo ոչ թե այն պատճառով, որ փնտրում ես այն, այլ այն պատճառով, որ սիրո առարկան այնպես է քեզանից պահանջում, որ նրա արժեքի համար դու տալիս ես քեզ և առանց փոխհատուցման

որևէ մտքի ստանում ես phileo: Ահա այսպիսին է դրա իմաստը:

Դա է պատճառը, որ կարող են լինել մարդիկ, որոնք տարբեր ձևով են արձագանքում Աստծուն՝ ի պատասխան Աստծո կանչին, որը քեզ դարձնում է հող, որ սպասում է սերմին կամ աչքեր, որոնք սպասում են լույսին: Բայց քրիստոնեական արտահայտությանը համապատասխանելու համար պետք է լինի գոհունակության զգացում: Այդ է պատճառը, որ ես չեմ կարողանում տանել այդ ծանր, քննադատող դատապարտության քարոզիչներին, ովքեր փորձում են մարդկանց ծեծելով տանել դժոխք:

Եթե միայն հասկանալիք, թե որքան անհույս և կորած վիճակում էինք մենք, երբ Աստված տվեց Իր լավագույնը, որ ուներ: Նրա Որդին տվեց Իր կյանքը, որովհետև Նա տեսավ ինչ-որ ներքին արժեք իմ ու քո մեջ: Նա մեր մեջ դրեց Լույսին արձագանքելու ընդունակությունը, երբ այն փայլի: Ինչ էլ մտածես իմ մասին, ես գիտեմ, որ Աստված ինչ-որ բան տեսավ Ժենե Սկոտի մեջ: Միգուցե դու այդքան էլ շատ առաջընթաց չես տեսնում նրա մեջ, բայց Աստված տեսավ ինչ-որ բան, և եթե որևէ մեկը չարձագանքեր Նրան ողջ հավիտենության մեջ, Նա դա կաներ ինձ համար:

Երբ դու իմանում ես հիմնական ճշմարտությունը... Այդ է պատճառը, որ ես քարոզում եմ շնորհքի և խաղաղության մասին և ոչ թե դատապարտության մասին: Աստծո շուրջը կատարելություն է: Աստվածաշունչը Եբրայեցիների թղթում ասում է, որ Նա չտվեց իրեն ընկած հրեշտակներին փրկելու համար: Մարգարեները ջանք արեցին տեսնել այդ խորհուրդը, որը հավիտենության մեջ էր: Պետրոսի թուղթն ասում է, որ հրեշտակները ցած կռացան քննելու այս խորհուրդը: Աստված, որը չէր գնա ընկած հրեշտակների ետևից, տեսավ ինչ-որ բան տղամարդկանց և կանանց մեջ, որոնց պիտի փրկեր և տվեց Իր Որդուն նրանց համար: Եվ լինեմ ես դուրեկան, թե ոչ, Աստված, ինչպես երգն է ասում, «նայեց իմ սխալներից այն կողմ» և տվեց Իրեն, որպեսզի վերացնի արգելքը, որպեսզի դիպչի իմ սրտի լարերին և առաջնորդի ինձ Լույսի մեջ:

Շատ անգամ ես չեմ ցանկացել կրել Նրա Լույսի գիտության պատասխանատվությունը, բայց ես այսօր շնորհակալ եմ և դու նույնպես կարող ես շնորհակալ լինել: Ինչ-որ բան այսօր քեզ բերեց այստեղ, ինչ-որ հրում, ինչ-որ հիմնական հայացք, որը ցուցանիչ է նրա, որ Աստված հոգ է տանում քեզ համար, և Նա Իր մտքում ինչ-որ բան ունի քեզ համար: Եվ բարկանալիս ես հանկարծ սկսում եմ հասկանալ. «Ցնծացիր Տերով»: Եթե ես ավելի շատ ցնծամ Նրանով և ավելի քիչ ինձանով, Նա կտա ինձ իմ սրտի ուզածները:

Երրորդ: Սա պարզապես կմախքն է: Հիմա հագեք ձեր 70 լիզանոց կոշիկները, որովհետև մենք շարժվելու ենք: Պայքարելով քո ուղեղի հետ՝ այս հիմնական կմախքը տալու նպատակն այն է, որ քեզ բերեն այս կետին. արդյո՞ք Աստված վստահելի է, դու կամենո՞ւ ես վազել Նրա մոտ: «Դե, ես այս խնդիրներն ունեմ»: Դե լավ, մի պահ փոխիր ուղղությունը: Սա բարդ բան չէ: Դու երեխաների հետ տուն ես գալիս և ունես խնդիրներ, բայց քո գիտակցության մեջ, ինչպես Եղյան, որը երբեք չէր մոռանում Աստծո ներկայությունը, տեղ տուր այդ Անձնավորության համար: Դու ունես գործընկերներ, և բարկությունը գալիս է նրանց միջոցով, բայց ավելի լավ է տեղ տաս սիրելիներին, հակառակ դեպքում փոխհարաբերությունը կվատանա:

Մտնելով 1988 թվականի մեջ, անկախ նրանից, թե ինչ խնդիրներ ունես, կարո՞ղ ես վստահել Տիրոջը: Ավելի լավ է մշտապես փախչենք Նրա մոտ, և ես արդեն ասել եմ, թե ինչպես դա անեք: Մի բարդացրեք այն: Պետք չէ, որ կանգնեք ձեր ձեռքերի վրա կամ ջարդեք ձեր մարմինը: Բերանը ինչ-որ ձևով առաջնորդում է մարմնին: Ուղղակի կանգնեք ձեր խնդրի մեջտեղում և ասեք. «Սպասի՛ր, Ժենե, սրտով հավատում ենք, բերանով դավանում»: Թվում է, թե այդ խնդիրները գալիս են բոլոր կողմերից: Հոյակապ է, ես 58 տարեկան եմ և ամեն անգամ, երբ հավատքով վազել եմ Նրա մոտ, Նա երբեք ինձ չի թողել: 1988 թ. ես պատրաստ եմ խնդիրը ցույց տալ իմ գարշապարին, իսկ դեմքով նայել Աստծուն: «Դե, բայց դու գիտես, իմ մտքում որոշ բաներ կան, որ Աստված պիտի անի»: Սպասիր: Ես որոշ ծրագրեր ունեի անցյալ տարի, բայց դրանք չկատարվեցին, առնվազն դրանցից մի քանիսը չկատարվեցին, և մի քանիսն էլ այս տարի ունեմ: Եթե իմ ու Տիրոջ մոտ ամեն ինչ կարգին է, գրողի ծոցը գնան այդ բոլոր ծրագրերը: Դա է նշանակում ցնծալ Տիրոջով: Ընդամենը այդքանը:

Հիմա մենք պետք է արագ շարժվենք: «Ի՞նչ կապ ունի դա Չինաստանում թեյի գնի հետ: Իմ վերաբերմունքը ճիշտ է: Ես գիտեմ, որ Տիրոջը կարելի է վստահել, անկախ ամեն ինչից: Ես վազելու եմ Նրա մոտ, որքան էլ ուժեղ լինի ճնշումը, և այո, երբ ամեն ինչ գոլորշիանա, Աստված կարող է ցանկացած այլ բան անել, քանի դեռ Նա և ես միասին ենք: Ի՞նչ կապ ունի դա իմ խնդրի հետ: Հիանալի է, ես այստեղ Հոբի նման նստած եմ իմ պրոբլեմի մեջ: Ես հիմա էլ ունեմ խնդիրներ և այդ խնդիրները Նրա հետ ունեմ: Ես վստահում եմ Նրան և իսկապես ցանկանում եմ Տիրոջը ավելի հաճեցնել, քան Նա ինձ, և Նա գիտի դա, և ես կարիք չունեմ որևէ մեկին դա ապացուցել»: Եվ ոչ էլ դու կարիք ունես:

Իսկ մեր խնդիրները:

Շատ լավ: «Հանձնիր քո ճանապարհը» (5-րդ խոսք): Գիտե՞ք, թե ինչ է այդ բառը նշանակում բնագրում: Քինգ Ջեյմսը այդպես չի ասում: «Հանձնիր քո ճանապարհը» (5-րդ խոսք): Հասկացա՞ք: Ընդգծեք: «Հանձնիր քո ճանապարհը»

Ինչպե՞ս ես դու դա անում: Դե, բնագրում այդ բառը նշանակում է «փաթաթել»... և դա օգտագործվում է ուղտերի քարավանը բեռնելու ժամանակ: Բեռնակիրը բեռը դնում է ուղտի վրա, որը ծնկի է իջել, հետո իր բեռը փաթաթում ուղտի մեջքին ու հեռանում: Ահա թե ինչ է այդ բառը նշանակում: «Փաթաթիր քո ճանապարհը Աստծո վրա»: Հիմա, «քո ճանապարհը». Ի՞նչ է դա նշանակում: Դե: Դա ամեն ինչ է, ինչի մեջ դու ներգրավված ես. քո ծրագրերը, քո խառնաշփոթ իրավիճակը...: Ես քեզ ձանձրացնում եմ: Ինչի մեջ որ ներգրավված ես, այդ ամենը փաթաթում ես Տիրոջ վրա:

Գիտե՞ք, թե որքան երկար կպահանջվի, մինչև պատմեն ձեզ իմ խնդիրները: Ինձ մի պատմեք: Ես կուշտ եմ իմ խնդիրներից: Ինչպե՞ս ես անում դա: Ես ուզում եմ, որ մենք գործնական լինենք, որովհետև մենք դեռ խոսում ենք այն մասին, թե ինչ պիտի մենք անենք: Ես ձեզ ասացի Նոր կտակարանի բանաձևը. «Սրտով հավատում ենք, բերանով դավանում»:

Գիտեք, քրիստոնյաներից շատերը նման են մի խումբ երկար թևերով կանաչ միջատների: Ամեն տեղ, ուր տեսնում ես նրանց, լսում ես. «Ու~հ - ու~հ – ու~հ»: Ես ուզում եմ ունենալ ուղեկցող շան արտոնություն երկնքի համար. քանի բոլոր քրիստոնյաները ստիպված են փակել իրենց աչքերը, երբ խոսում են Աստծո հետ, ես ուղղակի կարող եմ տեսնել նրանց, թե ինչպես են երկնքում քայլում և ասում. «Որտեղի՞ց դա քեզ»: Ավելին, նրանք իրականում այնպես սուրբ են դառնում: Դուք երբևէ նկատե՞լ եք, թե ինչպես են նրանք փոխում իրենց ձայնի տոնը: Նրանք սովորական խոսում են մինչև Աստծո հետ խոսելը: Եվ այնժամ նրանք ասում են. «Օ~, Աստվա~ծ»: Եթե ես Աստված լինեի, ես կասեի. «Փակիր ծիծաղելի բերանդ և խոսիր ինձ հետ այնպես, ինչպես ուրիշների հետ ես խոսում»:

Մաթևոս 6. Հիսուսն ասաց. «Երբ աղոթում եք, մի կանգնեք փողոցի անկյուններում և շեփոր հնչեցրեք փարիսեցիների նման: Գնա քո սենյակը և փակիր դուռը ու ծածուկ աղոթիր քո երկնային Հորը, որը քեզ կպատասխանի ծածուկում»:

Հոգևոր լինելու մեջ ոչ մի բարդ բան չկա: Շատ մարդկանց ավելի շատ հետաքրքրում է իրենց հոգևոր տեսքը, որ ուրիշ մարդիկ կտեսնեն, քան հոգևոր լինելը: Դու պարզապես առանձնանում ես կամ էլ հավանաբար կարող ես հենց այստեղ շշմջալ: Դու ասում ես. «Շատ լավ, հոյակապ է, ես դա կանեմ»: Ինչպե՞ս փաթաթեմ իմ բեռը Տիրոջ վրա: Արդյո՞ք նրան մտահոգում են այնպիսի բաները, ինչպիսին ամուսնավուծությունն ու սնանկացումն է կամ սրտի կաթվածը: Իհարկե, այո: Պարզապես ասա: Շատ մարդիկ ուղղակի մտածում են իրենց կրոնի մասին: Գնա ինչ-որ տեղ և սրտանց ասա: Եթե կարող ես վստահել Աստծուն, սրտանց արտաբերիր: Դու ասում ես. «Տեր, սա այն է, ինչը ինձ բարկացնում է: Ես ուրախ եմ, որ մենք կարող ենք դա հանձնել Քեզ»: Եվ դու պարզ ասում ես. «Սրտով հավատում ենք, բերանով դավանում փրկության համար»:

Եվ դու ասում ես. «Ահա Տեր, ես պատրաստվում եմ Քեզ հանձնել իմ ճանապարհը, իմ խնդիրները և ինձ»: Օ, չի կարող այդքան հասարակ լինել: Եթե այդքան հասարակ է, ավելի շատ մարդիկ այդպես կանեին: Քանի որ այդքան հասարակ է, մենք՝ խելամիտ մարդիկ, չենք անում դա: «Վստահիր քո ճանապարհը»: «Դու լու՞րջ ես, հովիվ»: Ավելի լավ է, որ հավատաս դրան: Դու պատրաստվու՞մ ես այդպես անել: «Այո»: Դա նշանակում է, որ Աստված լուծելու է ձեզանից մի քանիսի հարցը, որոնք ինձ համար խնդիր են եղել: Հեյ, հոյակապ է, նրանք կադոթեն, որ Աստված ինձ ետ ուղարկի: «Տիրոջը հանձնիր քո ճանապարհը»: Հետո կրկին՝ «վստահիր Նրան»:

Ապա 7-րդ խոսք. Ես ատում եմ այդ մասը: Այս սաղմոսի մեջ ինձ ամեն ինչ դուր է գալիս, բացի սրանից: Ես նույնիսկ դեմ չեմ նվիրմանը, փաթաթելուն: Ես դա արել եմ: Դա հիանալի է:

Հիմա, թիվ 4. «Համբերիր Տիրոջը» (անգլերենում՝ հանգստացիր Տիրոջ մեջ): Տուր դա Նրան: Լավ, ես փակվեցի սենյակում և արդեն մտքումս գիտեի, թե ինչ պիտի ասեմ: Ես հազիվ եմ կարողանում սպասել մինչև քարոզի ավարտը, որպեսզի մենակ մնամ, որովհետև Աստծո համար այսօր մի ամբողջ ճառ ունեմ ասելու: Ես այս մասին չեմ քարոզել ամբողջ տարին, և հենց հիմա ես վերջապես համոզվեցի, որ դա պետք է դնեմ Աստծո վրա: Ես ցուցակ ունեմ: Եթե իմ աչքերի մեջ ինչ-որ փայլ տեսնեք, նշանակում է, որ ես իմ ցուցակն եմ կազմում: Ես կքարոզեմ այս քարոզի շարունակությունը, որովհետև ես բավականաչափ հաճախ եմ դա քարոզել: Աստվա՛ծ, Դու դա ստանալու ես:

Հետո գալիս է այս մասը. «Համբերի՛ր Տիրոջը»: Ուղղակի թող դա: Համբերիր, հանգստացիր: Ի՞նչ, ես չեմ կարող ոչ մի կերպ հանգիստ լինել, երբ դա Աստծո ձեռքերի մեջ է, ոչ մի կերպ: Ես պետք է հետևեմ

Նրան ամեն վայրկյան: Դու երբեք չգիտես, թե ինչ կանի Աստված նրա հետ, ինչ դու տալիս ես Նրան. Հանկարծ Նա դա ավելի վատն է դարձնում: «Համբերությամբ սպասիր»: Աստված ամբողջ տիեզերքը ստեղծեց յոթ օրում, իսկ ես Նրան տվել եմ իմ այս փոքրիկ խնդիրը:

Երբ ես մտածում եմ Աստծո մասին, ես հասկանում եմ, որ իմ խնդիրները շատ մեծ չեն: «Աստված, ես կվերադառնամ և կստուգեմ Քեզ առավոտյան Ժ. 9-ին, և ավելի լավ է, որ դա արված լինի»: Սպասիր համբերությամբ: Ամենահիմար բաներից մեկը, որ ես երբևէ լսել եմ, սա է. «Եթե ես իմանայի, որ Աստված այդքան դանդաղ կշարժվի, ես Նրան չէի անհանգստացնի»: Սպասիր համբերությամբ:

Դե լավ, վերադառնանք մեր կետին. Կարո՞ղ եմ վստահել Նրան: Համոզված չեմ, միգուցե մեկ ժամ, բայց երկու օր: Ոչ, չգիտեմ:

Հոգևոր աշխարհում կան օրենքներ, որոնք գործում են այնպես, ինչպես բնական աշխարհի օրենքները: Ես ձեզ ասում եմ Աստծո բանաձևը խաղաղության համար: Վճռիր, թե ինչպիսին է քո վերաբերմունքը: Կարո՞ղ ես վստահել Նրան: Նա իրական է: Եկ ասենք, որ դու պայքարում ես Աստծուն գտնելու համար: Եթե կարողանայիր իրավիճակը կարգավորել, արդյո՞ք Նա քո սրտում առաջնահերթ տեղ կունենար: Ես սիրում եմ իմ մայրիկին և հայրիկին, բայց նրանք գիտեն, որ եթե ես համոզվեմ, որ Աստված ցանկանում է, որ ես գնամ Կալկաթա վաղը, ես ռեակտիվ ուժգնության քամի կստեղծեմ այնտեղ գնալու համար:

Հանձնի՛ր քո ճանապարհը: Լավ, ես գիտեմ, թե ինչպես դա անեմ: Ես կաշխատեմ այդ մասի վրա:

Թույլ տվեք արագ ավարտել այս ուղերձը նրանով, թե ինչ է անում Աստված: Թույլ տվեք ցույց տալ ձեզ մի բան, որը ասում է Աստծո Խոսքը: Ես տարիներ շարունակ քարոզել եմ, որ եթե դու քայլ անես դեպի Աստված, Նա քեզ կհանդիպի, նախքան ոտքդ գետնին դնելը: Նա սպասում է քո կողմից այդ նախաձեռնությանը, որը արձագանք է Նրա նախաձեռնությանը՝ ի պատասխան այն կանչին, որ Նա դրել է քո մեջ: Բայց մինչ կհասնես քո աշխատանքի դժվար մասին, թույլ տուր ցույց տամ քեզ Նրան պատկանելիք մասը:

«Վստահի՛ր Տիրոջը»... «Յնձացի՛ր Տերով»... «Տիրոջը հանձնի՛ր քո ճանապարհը»: Մենք դեռ խոսել ենք հինգ բաներից երեքի մասին, որ պետք է անենք:

Այն պահին, երբ կատարում ես երրորդ քայլը՝ քո բեռը փաթաթում Տիրոջ վրա, իսկ մինչ այդ ուղղում վերաբերմունքդ, վստահում, ցնծում և ապա հանձնում ճանապարհդ՝ «Տիրոջը հանձնիր քո ճանապարհը և Նրան հուսա», ի՞նչ է ասում, կարդացեք ինձ համար. «Եվ Նա կկատարի»: Ինչպիսի սարսափելի թարգմանություն: Այն խոսում է վերջնական արդյունքի մասին և չի թարգմանում բառը: Գնա և ստուգիր ցանկացած մեկնաբանություն: Կարող ես գնալ գրադարան, քո քաղաքի սեմինարիան: Թույլ տուր կարճ և հասարակ ասել քեզ, թե ինչ է այն ասում: Եբրայերենը շատ պարզ է. «Տիրոջը հանձնիր քո ճանապարհը, և Տերը կգործի»: Այդքանը:

Այն ասում է, որ այն պահին, երբ հանձնես Նրան, հանգիստ և պատրաստ եղիր, որովհետև Տերը գործի է անցնում. Դու պետք է, առանց երկար-բարակ մտածելու, քո բերանից հանես այն, ինչ կա սրտումդ և դա հանձնես Տիրոջը Նոր կտակարանի պարզ եղանակով, որովհետև ես կրկնում եմ. «Պետք չէ, որ երկինք ելնես և Նրան վայր բերես կամ վայր իջնես և Նրան վեր բերես: Ուղղակի խոսիր: Մոտիկ է քեզ խոսքը. այն քո բերանում է. խոսիր այն: Սրտով հավատում ենք, բերանով դավանում փրկության համար»: Այն պահին, երբ հանձնում ես, դու կարող ես դա այսօր անել, Տերն անցնում է գործի: Նա գործի է անցնում: Չի ասվում, որ Նա անմիջապես ավարտում է: Նա գործի է անցնում:

Արդեն 58 տարի է, ինչ ստեղծում եմ այս խառնաշփոթը: Ինչու՞ Նա չի կարող դա մեկ ժամում ետ տալ: «Ահա, Տեր, կարգավորիր դա»: Ես փչացրել եմ իմ առողջությունը՝ անելով այն, ինչ Աստվածաշունչը նկարագրում է որպես...

Ես այնքան եմ հոգնել, երբ Ջիմմի Սվազարտն ու Ջերրի Ֆալվելը քարոզում են մեղքի մասին: Նրանք նույնիսկ չգիտեն, թե որքան եմ հոգնել: Դուք հիշու՞մ եք Պոլ Պիպկինին: Նա պատրաստվում էր իր կյանքի պատմությունը ձեզ պատմել, երբ եկել էր այստեղ քարոզելու: Ամենահուզիչ բանը, որ նա անում էր, երեխա ժամանակ բաղիկներին ջրափոսից հանելն էր: Իսկ Ջիմմի Բեյքերը: Մեկ կտրուկ շարժում, և նա ազդարարվում է աշխարհի ամենամեծ մեղավորը: Ու վերջին բանը, որ ես լսեցի, տասնչորս բույս տևող մեղքի մասին էր: Ես ձեզ ցույց կտամ, թե որքան գիտուն եմ ես: Նա մեկ գործողությամբ փոխեց ազգային վիճակագրական տվյալների միջին ցուցանիշը: Այսպիսով դու կարող ես գնալ տուն և քեզ համար ժամ պահել: (Դու այս մասին չես լսի Ջերրի Ֆալվելի եկեղեցում: Ես քեզ հաստատ եմ ասում):

Մեղքը շատ հասարակ է Նոր կտակարանում: «Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցանք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դառավ»: Աստված արձակեց այն մի բանը, որը մեղքին կարողություն տվեց. դա ազատությունն է և ինքնորոշումը, որովհետև Նա շատ բարձր գնահատեց այն, ինչը չի կարող կատարվել առանց ազատության՝ ձրի տրվող սեր, ազատ հենվող վստահություն:

Մրա այլընտրանքը ազատության սխալ օգտագործումն է: «Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցանք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դառավ»: Սա իմ և ձեզանից մեծ մասի կյանքի պատմությունն է: Եվ խառնաշփոթության մեջ ընկնելով՝ մենք այն հանձնում ենք Տիրոջը. «Նա գործում է»:

Դու փչացրել ես քո առողջությունը, դա Օրալ Ռոբերտսի ծառայությունն է, մի սպասիր, որ Աստված այսօր նոր սիրտ կտա քեզ: Բայց Նա գործի է անցնում քեզ համար: «Տերը գործում է»: Էլ ի՞նչ: Ես այն հանձնել եմ Նրան: «Տերը ճանաչում է» (18-րդ խոսք): Երբ ես խնդիր եմ ունենում, բավականին բացատրություններ եմ տալիս: Ու երբ վերջացնում եմ, խոսակցությունն ունենում է մի քանի իմաստ: Ես գիտեմ, որ մեզանից յուրաքանչյուրը պայքարում է հասկացված լինելու համար: «Տերը, որ գործի է անցնում, գիտի, ճանաչում է»: Ես հիշում եմ, թե ինչպես էի Թայվանի հյուրանոցում նստել ինչ-որ մեկի կողմից բռնության ենթարկվելուց հետո: Ես բացեցի գրադարակը և հանեցի Գեդեոնի Աստվածաշունչը, ու միանգամից բացվեց այս տեղը (նման բան ինձ հետ այդքան էլ հաճախ չի պատահում):

«Տեր, դու գիտես իմ նստելն ու վեր կենալը. հեռվանց իմանում ես իմ մտածմունքները: Եթե դժոխքը փաթաթվեմ, ահա դու այնտեղ ես: Եթե արշալուսի թևերն առնեմ և ծովի վերջի ծայրերում բնակվեմ, այնտեղ էլ Քո ձեռքը կառաջնորդե ինձ»: Կապ չունի՝ որտեղ: « Եվ, եթե ասեմ. թող խավարն ինձ ծածկե. այն ժամանակ գիշերն էլ լույս կլինի իմ շուրջը»: Նա տեսնում է այդ ամենի միջով: Եթե դու վճռես կատարել այս վստահության մասը և պահես Աստծո խոսքը. և ես ստիպված եմ եղել ինքս ինձ հարցնել... (Գիտեք, երբեմն ես այնպես եմ մահու չափ վախեցել հայրիկիցս, ինչպես վախենում եմ Աստծո հետ խոսելիս): Բայց հաճախ ես համոզված եմ եղել, որ մի թունել եմ փորում ինքս ինձ համար, որի միջով Աստված չի կարող տեսնել: Նա ոչ մի ձևով չի կարող իմանալ որոշ բաներ, որոնց մեջ ես մտել եմ: Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ասում: «Երբ հանձնում ես Տիրոջը, Նա իսկույն գործում է: Տերը գործում է՝ ճանաչելով»: Ես չգիտեմ՝ ինչպես արձակել որոշ հանգույցներ, որ ինքս եմ կապել: Բայց Նա գիտի, թե որտեղ է յուրաքանչյուր խճճված թելը, և մենք կրկին վերադառնում ենք այդ վերաբերմունքային դիրքորոշմանը: Ես նկատի ունեմ, որ այս «հավատքի» գործը ռիսկի գործ է: Քանի որ դու մտնում ես 1988

թվականի մեջ, ես պարզապես կոչ եմ անում քեզ վարվել Աստծո եղանակով: «Հանձնիր քո ճանապարհը»:
Նա իսկույն գործի է անցնում:

Գե լավ: «Տերը ճանաչում է»: Այո, Նա ճանաչում է:

«Քայլեր»: Ո՞րն է հաջորդ բանը: Այսպիսով ես կարող եմ առաջ անցնել: «Տերովն է հաստատվում մարդիս գնացքը (անգլերենում՝ Տերն է պատվիրում բարի մարդու քայլերը) (23-րդ խոսք): Շատ լավ. ես հանձնել եմ իմ ճանապարհը Նրան, ես վստահում եմ Նրան, ցնծում եմ Նրանով: Ես հանձնել եմ իմ ճանապարհը Նրան. Նա անմիջապես գործի է անցնում, երբ ես հանձնում եմ:

Նա գիտի, ուստի Նա կարող է քանդել այն բաները, որոնք ես ինքս չեմ կարող... Նա գիտի այն քայլերը, որ իմ թշնամիները ձեռնարկում են: Նա ճանաչում է նրանց ծրագրերը. դա նման է գաղտնի գործակալ ունենալուն:

«Տերովն է հաստատվում»: Անշուշտ: Ամեն անգամ, երբ ես հանձնում եմ իմ ճանապարհը Տիրոջը, առաջին քայլը, որ Նա անում է, այն է, ինչը ես գիտեմ, որ Նա չպետք է աներ: Գուք երբևէ նկատե՞լ եք դա: Ես իմ ճանապարհը հանձնում եմ Տիրոջը կիրակի օրը: Առաջին գիշերն է, որ տարվա մեջ այդպիսի խաղաղություն ունեմ: Ես նստում եմ և Աստծուց գոհանում: «Գու ստացար դա, Տեր»: Եվ երկուշաբթի՝ մինչև Ժ.7-ը, այդ խաղաղությունն այլևս չկա: Ամեն մեկը գիտի, որ դա սխալ շարժում է: Այդ ժամանակ ես ասում եմ. «Նստիր, Աստված, և թույլ տուր այդ ամենը նորից ձևակերպեմ և հետո Քեզ մեկ ուրիշ հնարավորություն տամ»: Գուք հասկանո՞ւմ եք, թե ես ինչ եմ ասում ընդհանրապես:

Վիտոնի նախագահը՝ Վ. Ռեյմոնդ Էդմանը, մեկ անգամ գրել է այս մասին: Նա ասում էր, որ մարդիկ հանձնում են իրենց ճանապարհը Տիրոջը, և հետո դա նման է նամակ ուղարկելուն: Գու գնում ես փոստ և նամակը գցում փոստարկղի մեջ: Այնտեղ գրված են աշխարհացունց իրադարձություններ: Հետո նստում ենք մեքենան և գնում ինչ-որ տեղ ինչ-որ բան խմելու: Գու գիտես, որ գործողությունը կատարված է: Այդ աշխարհացունց իրադարձությունը պարունակող նամակը վաղուց գնացել է: Մենք հանգստանում ենք: Մենք նստում և համբերությամբ սպասում ենք արդյունքների: Որքա՞ն հաճախ ես դու գնում փոստ և տեսնում ինչ-որ մեկին՝ փոստարկղի դիմաց կանգնած և ձեռքը անցքի մեջ մտցրած: «Ի՞նչ ես անում»: «Ես չեմ կարող համոզված լինել, որ նրանք կուղարկեն նամակը. ես որոշում եմ կայացնում: Ես որոշում եմ կայացնում փոստային ծառայության վերաբերյալ: Սա շատ կարևոր նամակ է: Այն հուզում է ինձ, և ես

շատ ուշադիր են, ես հանգիստ չեմ լինի, մինչև համոզված չլինեմ»: Հետո դա թողնում ես, գնում և ուղղաթիռ ու ռեակտիվ ինքնաթիռ վարձում, պտտվում փոստատան շուրջը, որովհետև դու ուզում ես համոզված լինել, որ այն գնում է Չիկագո, բայց ուզում ես նաև համոզված լինել, որ այն գնում է Դենվերի միջով և ոչ թե Հյուսթոնի, այսպիսով դու հետևում ես յուրաքանչյուր փոստատար մեքենայի: «Ես ուզում եմ, որ այն Չիկագո հասնի, բայց ես գիտեմ նաև այնտեղ գնալու ճիշտ ճանապարհը»: Այստեղից քանի՞սն են երբևէ հետևել փոստատար մեքենաներին: Մենք ավելի շատ վստահում ենք ԱՄՆ-ի փոստային ծառայությանը, քան Աստծուն: Եվ դու փորձում ես ասել, որ վստահում ես Տիրոջը:

«Տերը ճանաչում է»: Նա ոչ միայն գործի է անցնում, այլ գործի է անցնում՝ ճանաչելով, և «Տերովն է հաստատվում»: Այսօր ես շնորհակալ եմ Աստծուց արժաթագույն մագերի համար, որովհետև այս քարոզը քարոզելիս որոշ հիշողություններ են վերադառնում այն ժամանակներից, երբ բոլոր լավ մտադրություններով ես գիտեի, թե որն է Աստծո կամքը, և եթե Նա դա չաներ, ես ինքս կանեի: Ու ես ձեռնարկում էի, և լավ էլ ստացվում էր: Հետո ընկնում էի խառնաշփոթի մեջ: Հավատացեք ինձ, ես իսկապես շատ լավ եմ Աստծուն հիշեցնելուց, թե որքան կարևոր են ես Նրա ծրագրի մեջ: Ավելին, Նա նույնիսկ չէր էլ տեսնում, թե ինչ պետք է արվեր: Ես դա անում էի Նրա փոխարեն՝ ակնկալելով, որ Նա կարթնանա իմ սկսելուց հետո:

Ես պարզապես կարող եմ տեսնել, թե ինչպես է Նա երկնքում խորհուրդ հրավիրում. «Գիտեք, Ժենեն կրկին մեզանից առաջ է ընկել: Հիմա մի խումբ հրեշտակներ ուղարկենք այնտեղ: Մենք պետք է դա անեինք առանց նրա սկսելու: Հիմա իջեք այնտեղ և օգնեք նրան, որ կատարի այդ աշխատանքը»: Հասկացա՞ք:

Մենք ավելի շատ վստահում ենք փոստային բաժանմունքին, քան Աստծուն: Երբ դու դա հանձնում ես Նրան երկուշաբթի առավոտյան, սպասիր: Պատրաստ եղիր քո հանձնարարությանը, որովհետև «Տերովն է հաստատվում մարդիս գնացքը»: Հիմա ընդունելով Աստծո գործողությունների կատարման եղանակը՝ ես քեզ ասում եմ, երբ դու հանձնում ես, և երբ քո վերաբերմունքը ճիշտ է, Տերը կհաստատի քո քայլերը: Ուստի վաղը առավոտյան, երբ տոռնադոն խփի քո տանը, և ամբողջ տանիքը նստի (այս գիշեր ամեն ինչ տալիս ես Աստծուն), պարզապես գոհացիր Աստծուց, որ դու ներքնահարկում ես: Վեր կաց ու իմացիր, որ Աստված մաքրում էր տախտակամածը ինչ-որ բանի համար: Ահա ինչ է հավատքը: Դու արթնանում ես մի վերաբերմունքով, որ ինչ էլ պատահի, Տերն է հաստատել կամ պատվիրել դա:

«Լավ, ես հանձնել եմ իմ ճանապարհը Տիրոջը, ու այս ամուսնալուծության հարցն է ծագել, իսկ ես ուզում եմ...»: Հիշում եք այն տղային, որ մի գիշեր զանգահարեց ու ասաց. «Ի՞նչ անեմ»: Ես համոզված եմ, որ Նա լսել էր, թե ինչ էի ես սովորեցնում և հանձնել էր իր ճանապարհը Տիրոջը: Ահա ես ստանում եմ այս հեռախոսազանգը. «Ես սնանկացել եմ, և իմ կինը լքել է ինձ»: Ես ասացի նրան. «Շատ քիչ մարդիկ են, որ քո տարիքում հնարավորություն են ստանում նորից մաքուր էջից սկսել»:

«Դե, ես հանձնել եմ իմ ճանապարհը Տիրոջը»: Շատերս այսպես ենք անում. «Շատ լավ, Տեր, ես վստահում եմ Քեզ: Ես ցնծում եմ Քեզանով: Բայց այստեղ ամուսնալուծության հարց կա, ու ես չեմ կարող ապրել առանց այս կնոջ, այսպիսով ես իմ ճանապարհը Քեզ եմ հանձնում»: Չարմանալի է, թե որքան հոգևոր են մարդիկ դառնում, երբ ընկնում են անախորժությունների մեջ: Նրանք ամեն տեսակի սակարկություններ են անում Աստծո հետ. խրամատային կրոն: Այսպիսով դու հանձնում ես քո ճանապարհը և վաղը առավոտյան իմանում, որ կինդ ամուսնանում է մեկ ուրիշի հետ: Հետո նստում ես ու սկսում կրկին բարկանալ՝ զարմանալով, թե ինչպես կարող ես ինչ-որ մեկին սպանել: Ընկե՛ր, Աստված մաքրում է տախտակամածը, որպեսզի քեզ համար լավը գտնի: Այդպիսին պետք է լինի քո վերաբերմունքը: Եթե դու դա հանձնել ես Տիրոջը, հանգստացիր և համբերությամբ սպասիր, որովհետև Տերն իսկույն գործի է անցնում՝ ամեն բան իմանալով, և Նա կհաստատի քո քայլերը: Նա քեզ կանցկացնի այդ ականադաշտի միջով, եթե դադարես վիճել այդ մասին: Հասկանո՞ւմ ես ինձ:

Ո՞րն է հաջորդ բանը, որ Նա անելու է: «Տերը նրա ձեռքից բռնում է»: «Թեև վայր ընկնի, չի կործանվի, որովհետև Տերը նրա ձեռքից բռնում է»: Լսեք, եթե դու սկսես ապրել այնպես, որ քո ճանապարհը հանձնես Տիրոջը, հանգստանաս և համբերությամբ սպասես, թույլ տուր ասել քեզ, թե որտեղից է գալու հարձակումը:

Երբ դու տատանվում ես, գալիս է մեղադրողը, որ քեզ ասի, որ դու ամեն ինչ ցիր ու ցան արեցիր, և քո հնարավորությունը վերջացած է: Այն բանը, որ ինձ դուր է գալիս քրիստոնեության մեջ, այն միջոցն է, որ Աստված տրամադրում է սայթաքողներին և վայր ընկնողներին: «Թեև վայր ընկնի, չի կործանվի, որովհետև Տերը նրա ձեռքից բռնում է»:

Քանի դեռ Եղյան կատարյալ էր, Աստված ավելի խիստ էր նրա նկատմամբ. ուղարկում էր նրան մի առվի մոտ, որը չորացել էր և մի որբևայրու մոտ, որը ոչինչ չուներ: Երբ նա վերջապես վայր ընկավ, Աստված հրեշտակ ուղարկեց, որպեսզի նրա համար նկանակ թխեր: Դուք լսեք ինձ՝ այս բանը շատ

անգամ ասելիս. պատահական չէ, որ նա, ով ամենից շատ Աստծուն հիասթափեցրեց, ընտրվեց ուղերձ քարոզելու Հոգեգալստի օրը, որը սկիզբ դրեց եկեղեցու գոյությանը: Շատ մարդիկ եղած կլինեին, որոնք կքաշեին նրա հագուստի ծայրն ու կասեին. «Նստիր, ես լսել եմ, թե ինչպես էիր դու առաջ խոսում, և դու այն մեկն ես, որը ուրացավ Տիրոջը. դու չպետք է խոսես»:

Ես ասում եմ ձեզ՝ բանաձևը պարզ է. վստահի՛ր Տիրոջը, ցնձա՛, հանձնի՛ր, հանգստացի՛ր, համբերությամբ սպասի՛ր: Տերն իսկույն գործի է անցնում, երբ դու հանձնում ես, և Նա դա անում է՝ ճանաչելով: Նա կարող է քանդել մասերը: Նա հաստատում է քո քայլերը:

«Իսկ եթե ես վայր ընկնե՞մ», որը դու անպայման կանես, քանի որ սկսել ես այս ճանապարհը : Այդ է պատճառը, որ ես մինչև հիմա այստեղ եմ: Արդեն երկար ժամանակ է, որ ես հանձնում եմ իմ ճանապարհը, և ես վայր եմ ընկել ավելի շատ, քան ցանկանում եմ հաշվել: Իսկ սատանան հասկացել է, որ նրան երբեք չի հաջողվի ինձ խաբել, որպեսզի ես հանձնվեմ: Նա այն ժամանակ է ինձ վրա հարձակվում , երբ ես մտածում եմ, որ ինչ-որ ձևով կամ Աստծուց առաջ եմ անցել կամ Նրան բաց եմ թողել, կամ ճանապարհից դուրս եմ ընկել: Եվ որքան շատ է նա սիրում գալ և ասել այն մարդուն, ով վայր է ընկնում. «Դու անարժան ես, դու չես ստանա քո աղոթքի պատասխանը»: «Թեև վայր ընկնի,- խցկիր դա նրա ատամների մեջ,- չի կործանվի»:

Երբ Աստված կանչեց քեզ, Նրա կոչումը և ընտրությունը զղջալ չունի: Ինձ չի հետաքրքրում, դու հանձնել ես մեկ տարի առաջ ու 365 օր է՝ վայր ես ընկնում. «Թեև վայր ընկնի, չի կործանվի, որովհետև Տերը նրա ձեռքից բռնում է»:

28-րդ խոսք. «Տերը իր սուրբերին չէ թողում». իսկ «սուրբ»-ը այն բառն է, որը գալիս է նվիրումից: Այն եկեղեցական բառ է, որը նշանակում է՝ նրանք, ովքեր իրենց ճանապարհը հանձնել են Նրան: Կապ չունի , թե քանի անգամ ես դու վայր ընկնում, Տերը չի թողնի քեզ:

Եվ վերջին խոստումն է. «Տերը կօգնե նրանց և կազատե նրանց»: Ինձ սա շատ է դուր գալիս. «կազատե նրանց ամբարիշտներից»: Ազատագրումը վերջնական խոստումն է: Ինչպե՞ս կարող ես որոշել, որ Աստծուն գալը անպտուղ ջանք է: Դու կարող ես Աստծուն շնորհակալություն հայտնել այն հրման համար, որը քեզ բերեց և առաջին տեղում դրեց, որով դու տարբերվում ես մնացած աշխարհից և իրականում չես պախարակում Աստծուն կամ որևէ բան, որ Նա անում է:

Նրանք, ովքեր ունեն այն փոքրիկ արձագանքելու ընդունակությունը, որը դրվել է ձեր մեջ Աստուծոց, ես ձեզ այսօր ասում եմ, և սա իմ տարեվերջյան հովվական ուղերձն է, ունեցեք այս վերաբերմունքը: Եվ եթե դուք գաք այն կետին, որ կարողանաք վստահել այն Տիրոջը, ում ծառայում եք, ցնծաք Նրանով, նոր ձեզ հանձնեք ձեր ճանապարհը Նրան, հանգստանաք և սպասեք վստահությամբ, այն պահին, երբ հանձնեք, Նա գործի կանցնի: Չեզանից ոմանք, ովքեր այստեղ նստած շշնջում էին, մինչ մեքենայով տուն կգնան, գորաց Տերը, ով կարող է աստղերին հրամայել , որ իրենց տեղում լինեն, պատրաստվում է աշխատել ձեր խնդրի ուղղությամբ՝ գիտենալով այն, ինչ դուք չգիտեք:

Վստահեք Նրան, որ հաստատի ձեր քայլերը, և մի դժգոհեք, եթե ձեզ թվա, թե Նա սխալ ճանապարհով է գնում: Երբ վայր ընկնեք, վեր կացեք և կրկին սկսեք, որովհետև չեք կործանվի: Նա ձեր ձեռքից կբռնի: Նա ձեզ չի թողնի և կազատի ձեզ ամեն բանից: Դա իմ խոստումն է ձեզ 1987 թվականին: Կտեսնվենք հաջորդ կիրակի:

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են